https://doi.org/10.46991/SL/2023.97.160

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սեդա Ստեփանյան
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Ներածություն - Քրեական դատավարության մասնակիցների կամ գործի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ կրող անձանց անվտանգության ապահովման խնդրի արդյունավետ մեխանիզմների ձևավորումը էական խթան է ոչ միայն հանցավոր ոտնձգություններից անձի անձեռնմխելիության ապահովման, այլև հանցագործությունների բացահայտման, կանխարգելման, քրեական վարույթների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության երաշխավորման համար:

20-րդ դարի երկրորդ կեսին և 21-ի դարի սկզբին մի շարք երկրներում առաջ եկավ քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության համար օրենսդրական միջոցներ ձեռնարկելու միտումը: Ավելին, որոշ արևմտյան երկրներում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ձևավորվեցին քրեական վարույթներով վկաների և տուժողների պետական պաշտպանության արդյունավետ համակարգեր:

Հայաստանի Հանրապետությունում քրեական վարույթի մասնակիցների պետական պաշտպանության ինստիտուտը, չնայած իր օրենսդրական կարգավորմանը, դեռևս զարգացման փուլում է: Թեև Հայաստանը կրում է միջազգային մի շարք փաստաթղթերով սահմանված պարտավորություններ քրեական վարույթի մասնակիցների իրավունքների և անվտանգության ապահովման ոլորտում, սակայն տուժողի և վկայի անվտանգության ապահովման օրենսդրորեն սահմանված միջոցներն ու դրանց գործնական կիրառությունը բավական արդյունավետ չեն: Ստեղծված իրավիճակում քաղաքացիները հակված չեն համագործակցելու իրավապահ մարմինների հետ, ինչն իր հերթին բարձրացնում է հանցավորության լատենտայնությունը: Անհրաժեշտ է ընդգծել, որ այս ոլորտում օրենսդրությունը շարունակում է զարգանալ և կատարելագործվել: Ուստի զարգացած երկրներում քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության առաջադեմ համակարգերի ուսումնասիրությունն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում նշված ոլորտի արդյունավետ կարգավորման համար:

Հետազոտություն – ԱՄՆ- Արտասահմանյան երկրներից ուշագրավ է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը, քանի որ ԱՄՆ-ն առաջիններից է, որտեղ ձևավորվեց և գործնական կիրառություն ստացավ քրեական վարույթի մասնակիցների անվտանգության պաշտպանության ինստիտուտը: Տարիների ընթացքում այստեղ ձևավորվել է պետական պաշտպանության արդյունավետ համակարգ: ԱՄՆ-ն արդարադատության նախարարության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ծրագիրը, որն ընդունվել է 1961 թվա-

կանին, դարձավ քրեական դատավարությանն աջակցող անձանց անվտանգության ապահովման առաջին օրենսդրական փորձը: Ծրագիրը նախատեսում էր վկայի տեղափոխում այլ բնակության վայր՝ նրա համար տոմսի ձեռքբերմամբ: 1971 թվականին ընդունվեց Կազմակերպված հանցավորության հսկողության մասին օրենքը, որը հնարավորություն ստեղծեց ֆինանսական միջոցներ հատկացնել վտանգի ենթարկված վկաների պաշտպանության նպատակով: Սակայն նշված օրենքի դրույթները վերաբերում էին միայն այն վկաներին, որոնք կազմակերպված հանցավորության հետ կապված վարույթների մասնակից են:

Քրեական վարույթի մասնակիցների պաշտպանության ոլորտում էական քայլ էր վկաների պաշտպանության դաշնային ծրագրի ընդունումը 1971 թվականին: Ծրագիրը վերաբերում է այն վկաներին, որոնք դատարանում ցուցմունք են տալիս վտանգավոր հանցագործների դեմ: Նշված ծրագիրն իրականացվում է երեք մակարդակով՝ դաշնային, նահանգային և տեղական: Ընդ որում՝ ծրագիրը գործում է ոչ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիների, այլև օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող և այլ անձանց պաշտպանության համար:

Ծրագրի շրջանակներում մեղադրանքի կողմի վկաների և նրանց ընտանիքների առողջությունն ու բարեկեցությունն ապահովելու նպատակով՝ ԱՄՆ արդարադատության նախարարության ծառայողները իրավասու էին գնել կամ վարձակալել բնակելի տարածքներ, կատարել այնտեղ անհրաժեշտ փոփոխություններ: 1982 թվականին ընդունված «Հանցագործության զոհերի և վկաների պաշտպանության մասին» օրենքն ավելի լայն իրավական պաշտպանություն երաշխավորեց քրեական դատավարության մասնակիցների համար, ինչպես նաև բարելավեց հանցագործության զոհ դարձած անձանց ստացված վնասների փոխհատուցման մեխանիզմը: Օրինակ՝ վկային կամ տուժողին սպառնալիքներ ներկայացնելու պարագայում նախատեսվում էր տուգանք՝ 250 000 ԱՄՆ դոլարի չափով կամ մինչև 10 տարի ազատազրկում, հնարավոր էր նաև երկու պատիժների համակցում[1]:

1984 թվականից սկսած՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում քրեական դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով կիրառվում են այնպիսի պաշտպանական միջոցներ, ինչպիսիք են վկաների տեղափոխումը բնակության այլ վայր, այլ անձնական տվյալներով փաստաթղթերի տրամադրումը, աշխատանքի ապահովման հարցում աջակցությունը և ծրագրի տևողության ընթացքում ֆինանսական աջակցությունը: Պաշտպանության ենթակա անձի հետ կնքվում է հատուկ պայմանագիր (հուշագիր), որի համաձայն՝ անվտանգության միջոցների իրականացման փոխարեն քրեական դատավարության մասնակիցը պարտավորվում է հանդես գալ դատարանում, ճշմարտացի ցուցմունք տալ, պահպանել պետական պաշտպանությունն ապահովող մարմինների օրինական պահանջները և տեղեկացնել նրանց իր գործունեության և գտնվելու վայրի մասին:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է, որ հաստատված լինեն այն հանգամանքները, թե արդյոք վկան իսկապես տիրապետում է տեղեկությունների, որոնք կօգնեն քննությանը, և արդյոք վկային կամ նրա մերձավոր ազգականներին սպառնում է վրեժ: Այս հանգամանքները պարզելուց հետո որոշվում է այն հարցը, թե որ մարմինն է ֆինանսական միջոցներ տրամադրելու այդ անձին պաշտպանելու համար: Հաճախ այդ առաքելությունը ստանձնում են դաշնային գործակալությունները, սակայն նահանգները կամ տեղական գործակալությունները նույնպես կարող են ներգրավվել այդ գործընթացում: Ընդ որում, այդ դեպքում Արդարադատության նախարարությունն է սահմանում, թե ինչ չափով է իրականացվելու անձի պաշտ-

[1] Տե՛ս **Дьяконов А.С.**, Сравнительно-правовой анализ регулирования механизма защиты участников уголовного процесса в Российской Федерации и зарубежных стран //Вестник Прикамского социального института, №1(69), էջ 9, РФ, Пермь, 2015.

պանությունը[1]:

Դատավարական տեսանկյունից գործընթացը սկսում է պաշտպանության միջոցների անհրաժեշտության մասին շրջանի կամ նահանգի դատախազի կողմից Արդարադատության նախարարություն պատճառաբանված միջնորդություն ներկայացնելուց: Դատախազը նախապես մանրամասն ուսումնասիրում և հիմնավորում է պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությունը, դրա հնարավոր տևողությունը, միջոցներն ու մեխանիզմները, որոնք պետք է կիրառվեն, քանի որ դրանց իրականացումը բավականին թանկ է: Իրավապահ մարմինների ծառայողները մանրամասն ստուգում են նաև այլ հանգամանքներ, այդ թվում՝ վկայի բնութագիրը և նրա կողմից ներկայացված տեղեկությունների իսկությունն ու վարույթի շրջանակում դրանց արժեքայնությունը: Արդարադատության նախարարության կողմից անձին ծրագրում ընդգրկելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո պաշտպանության ենթակա անձի ազատության մեջ գտնվելու պարագայում ծրագրի իրականացումը վստահվում է ԱՄՆ դատական կատարման ծառայությանը (Marshals Service), իսկ ազատազրկման վայրերում գտնվելու դեպքում՝ բանտերի դաշնային բյուրոյին:

Նշված ծրագիրը տարեկան իրականացնում է միջինը 20 000 շահառուների պաշտպանություն, ընդ որում՝ մեկ մասնակցի համար իրականացվող ծախսերը միջինը կազմում են 10 000-50 000 ԱՄՆ դոլար:

ԱՄՆ-ում վկաների և տուժողների պաշտպանության ծրագրերը ներառում են ոչ միայն ֆիզիկական անվտանգության ապահովման վերոգրյալ քրեադատավարական մեխանիզմները, այլև հոգեբանական աջակցության տրամադրում պաշտպանության ենթակա անձին և նրա ընտանիքին, այդ թվում՝ հարմարվողականությունն ապահովելու նպատակով, բժշկական բնույթի ծառայություններ (օրինակ՝ բժշկական ապահովագրություն), իրավաբանական աջակցություն, այդ թվում՝ նոր տվյալներով փաստաթղթերի ստացման հարցում, սոցիալական և ֆինանսական աջակցություն կենսապահովման չափով (տարեկան 60 000 ԱՄՆ դոլար):

Բացի այդ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործում են հանցավոր ոտնձգություններից տուժածներին, ինչպես նաև հանցագործությունների դադարեցման կամ կանխման նպատակով իրավապահ մարմինների հետ համագործակցած անձանց պետական բյուջեի հաշվին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ կանոնակարգեր: Սակայն այսօր ԱՄՆ-ում նման միջոցառումների ֆինանսավորման խնդիր կա, ուստի կատարվում է կյանքի և առողջության պաշտպանությանը հավակնող անձանց խիստ ընտրություն[2]:

Կանադա— Կանադայում վկաների և տուժողների պաշտպանության ծրագիրը գործում է 1984 թվականից: Այն նախատեսում է քրեական վարույթի մասնակցի և նրա հարազատների կյանքի, առողջության և սեփականության պաշտպանության նպատակով համապատասխան միջոցների ձեռնարկման հնարավորություն և ընթացակարգեր: Տարեկան նշված ծրագրում ընդգրկվում է միջինը 150-200 մարդ, ընդ որում պաշտպանության ենթակա դատավարության յուրաքանչյուր մասնակցի համար իրականացվող ծախսերը զգալիորեն ավելի են, քան ԱՄՆ-ում: Կիրառվող անվտանգության միջոցներից են անձնական պաշտպանությունը, անձին այլ վայր տեղափոխելը, փաստաթղթերի փոխարինումը և այլն:

Ծրագրի շրջանակում ընդգրկվելու համար առանձնացված են հատուկ պահանջներ, նախ՝ իրավասու մարմինների կողմից հավաքագրվում է մեծ քանակութ-

---

[1]Տե՛ս **Бабичева В. С**. Институт охраны прав участников уголовного судопроизводства в Российской Федерации и в зарубежных странах// Национальная ассоциация ученых (НАУ), №76, РФ, Санкт Петербург, 2022, էջ 39.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 40:

յամբ տեղեկություն թե՛ պաշտպանվող անձի բնութագրի, թե՛ նրա կողմից ներկայացվելիք ցուցմունքի վերաբերյալ, երկրորդ՝ նշված տեղեկությունների հիման վրա իրավապահ մարմինների կողմից տրվում է անձին ծրագրի մեջ ներառելու վերաբերյալ համաձայնություն, և ներկայացվում են պաշտպանության եղանակների վերաբերյալ առաջարկներ:

Վերոգրյալ գործողություններից հետո քրեական վարույթի նշված մասնակցի հետ կնքվում է պաշտպանության մասին գրավոր պայմանագիր, որում սահմանված են ծրագրում ներգրավված անձանց պարտավորությունները: Այդ պահից սկսած՝ վկայի հետ շփվող մարդկանց թիվը խիստ սահմանափակվում է:

Նշված ծրագիրն իրականացվում է Թմրամիջոցների դեմ պայքարի վարչության և Կանադայի Թագավորական հեծյալ ոստիկանության կողմից: Ընդ որում, պաշտպանության տրամադրումը կրում է շարունակական բնույթ, նույնիսկ եթե, օրինակ, անձը տեղափոխվում է այլ բնակության վայր: Այս դեպքում ոստիկանության ծառայողն է պատասխանատվություն կրում պաշտպանվող անձի բնակության վայրի փոփոխության համար[1]: Ավելին, Կանադայում վկաների պաշտպանության ծրագիրը պաշտպանվող անձի և նրա ընտանիքի անդամների համար գործում է ցմահ: Պաշտպանության դադարեցումը հնարավոր է վկայի նախաձեռնությամբ, պաշտպանության պայմանագրի պահանջները չկատարելու և պաշտպանվող անձի կողմից հանցագործություն կատարելու դեպքում:

Կան պետություններ, որտեղ նմանատիպ ծրագրերը կիրառվում են միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների որոշ տեսակների պարագայում, օրինակ՝ ապօրինի թմրաշրջանառություն, կազմակերպված հանցավոր խմբերի ձևավորում, դիտավորյալ սպանություն և այլն: Այդպիսի երկրներից են Բելգիան, Հունգարիան, Լիտվան և Իտալիան[2]:

Իտալիա— Այս իմաստով հարկ է առանձին անդրադարձ կատարել Իտալիայի Հանրապետությանը, քանի որ պատմականորեն հենց այս պետությունում են առաջիններից մեկը զգացվել քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ գործադրված ապօրինի ազդեցությունն ու դրա հետևանքները: Ուստի, Իտալիայի պետական մարմինները դարձան քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության կիրառման առաջամարտիկները Եվրոպայում:

1984 թվականին Իտալիայում ընդունվեց վկաների պաշտպանության հատուկ ծրագիր, որի համակարգումը իրականացնում է Ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության վարչության պաշտպանության հատուկ կենտրոնական ծառայությունը և մաֆիայի դեմ հարուցված գործերով հանրային դատախազության գրասենյակը (Prokuratore Nazionale Antimafia)[3]:

Այս ծրագիրը կիրառվում է այն դեպքերում, երբ քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության համար իտալական օրենսդրությամբ սահմանված այլ միջոցները բավարար չափով արդյունավետ չեն: Վկաների պաշտպանության հատուկ ծրագիրը ներառում էր քրեական դատավարության մասնակիցների վրա ապօրինի ազդեցությունների վերացմանն ուղղված մի շարք կոնկրետ միջոցառումներ, սակայն դրանցում բացակայում էին կասկածյալներից և մեղադրյալներից ցուցմունքներ ստանալու մեխանիզմներ: Նշված հանգամանքը ծրագրի էական թերություններից էր:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Piotr Bakowski**. Witness protection programs: EU experience in the international context // Library Briefing: Library of the European Parliament. 28.01.2013. P. 5.

[3] Տե՛ս Новые меры в отношении похищения лиц с целью вымогательства и меры по защите лиц, сотрудничающих с правосудием. Закон Италии// Сборник переводов. М., 1992. էջ125-132:

Իրավապահ մարմինների հետ համագործակցող քրեական դատավարության մասնակիցների պաշպանությունը հետագայում ամրագրում է գտել երկու կարևոր փաստաթղթերում: Դրանցից առաջինը Իտալիայի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգիրքն է, որը ընդունվել է 1989 թվականի հոկտեմբերի 24-ին, իսկ երկրորդը՝ 1992 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Քրեական դատավարության նոր օրենսգրքում հրատապ փոփոխություններ կատարելու և մաֆիայի դեմ պայքարի միջոցների մասին» օրենքն է: Դրանցում ամրագրվել է իրավապահ մարմինների գործունեությանը աջակցող քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության առավել հստակ մեխանիզմ: Առավել կարևոր և հաճախակի օգտագործվող միջոցներից են, օրինակ՝

- դատական ոստիկանության կողմից անձնական անվտանգության պաշտպանություն,
- բնակության վայրի փոփոխություն կամ մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլը տեղափոխել,
- գաղտնիությունն ապահովվելու նպատակով ժամանակավոր փաստաթղթերի օգտագործում,
- նոր փաստաթղթերի տրամադրում՝ ընդհանուր անձնական տվյալների փոփոխությամբ[1]:

Անվտանգության այս միջոցները կարող են կիրառվել նաև մերձավոր ազգականների, համատեղ բնակվող անձանց, ինչպես նաև այլ անձանց նկատմամբ, որոնց իրական վտանգ է սպառնում պաշտպանվողների հետ իրենց հատուկ հարաբերությունների պատճառով: Անվտանգության միջոցների կիրառման թույլտվությունը տալիս է շրջանի գլխավոր դատախազը: Նման որոշում կայացնելիս հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ արդարադատությանն օժանդակող անձանց սպառնացող վտանգի աստիճանը և դրա իրական հավանականությունը, ինչպես նաև այն ներդրումը, որը պաշտպանվող անձն ունի կամ կարող է ունենալ վարույթի քննության համար:

Քրեական արդարադատությանն աջակցող անձանց անվտանգության ապահովման նպատակով թույլատրվում է նրանց բացակայությունը դատական նիստերի դահլիճից: Նրանք կարող են ցուցմունք տալ տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ գտնվելով այլ տարածքում, որտեղ ապահովված է իրենց անվտանգությունը:

Օրենքը պարտավորեցնում է պաշտպանվող անձանց պահպանել իրենց համար սահմանված անվտանգության նորմերը և ակտիվորեն համագործակցել իրավապահ մարմինների ծառայողների հետ պաշտպանությունն ապահովելու հարցում: Օրինակ՝ նրանք պետք է համապատասխան մարմիններին տրամադրեն ամբողջական և ստուգված տեղեկատվություն՝ իրենց ընտանեկան և քաղաքացիական կարգավիճակի, ունեցվածքի, ընթացիկ քրեական, քաղաքացիական և վարչական վարույթների վերաբերյալ[2]:

Քրեական վարույթի մասնակիցների պետական պաշտպանության ոլորտում Իտալիայի օրենսդրությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պաշտպանության միջոցների կիրառման հետ կապված փաստաթղթերի կազմման աշխատանքին՝ խստիվ պահպանելով գաղտնիության սկզբունքը:

Իտալիայում տուժողների և վկաների պաշտպանության ծրագիրը գործում է բավականին արդյունավետ, սակայն հարկ է ընդգծել, որ դրա հիմնական ուղղվածությունը կազմակերպված հանցավորության (մաֆիայի) դեմ պայքարն է: Այս ի-

---

[1] Տե՛ս **Лозовский Д.Н.**, Европейский опыт деятельности правоохранительных органов по обеспечению безопасности участников уголовного судопроизводства, 2014 https://core.ac.uk/outputs/75998303 .

[2] Տե՛ս նույն տեղում:

մաստով հատուկ ուշադրություն է դարձվում այն վկաներին, որոնք հանցավոր խմբերի ակտիվ մասնակիցներ են և համաձայնվել են համագործակցել իրավապահ մարմինների հետ: Ստացվում է, որ այլ վարույթներով ապօրինի ազդեցության ենթարկվող քրեական դատավարության մասնակիցների պաշտպանությունը այդ աստիճան համակարգված չէ, ինչ իտալական ծրագրի թերություններից է:

Ֆրանսիա— Ֆրանսիայի Հանրապետությունում տուժողների և վկաների պետական պաշտպանության ինստիտուտը դատավարական և նյութական իրավունքի նորմերի համակցություն է, որում արտացոլված են քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության սկզբունքներն ու չափանիշները: Երկրում քրեական դատավարության մասնակիցների անվտանգության ապահովման հատուկ նորմերը սահմանված են նախ և առաջ Ֆրանսիայի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում: Ոլորտի կարգավորման մեջ նաև մեծ դեր են ունեցել 1982 թվականի փետրվարի 2-ին ընդունված թիվ 81-82 օրենքը, որով Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում արվեցին էական փոփոխություններ, և 1983 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Հանցագործություններից տուժած անձանց պաշտպանության ուժեղացման մասին» օրենքը, որում տեղ գտան քրեական դատավարության մասնակիցներին տրամադրվող աջակցության հստակ միջոցառումներ, այդ թվում՝ կրած վնասների փոխհատուցում պետական բյուջեի հաշվին:

Նշված իրավական ակտերում ամրագրված նորմերը գործնականում ձևավորում են իրավական, կազմակերպչական և ֆինանսական բնույթի միջոցառումների համալիր, որը ներառում է նաև տուժողներին և վկաներին տրամադրվող հոգեբանական աջակցության մեխանիզմ:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը առանձնացնում է քրեադատավարական գործընթացում սուբյեկտների երկու հիմնական խումբ, որոնց նկատմամբ կարող է կիրառվել քրեական վարույթի մասնակիցների պաշտպանության պետական ծրագիրը՝

- արդարադատության համակարգում աշխատող պաշտոնատար անձինք (մագիստրատ, երդվյալ ատենակալ, արբիտր, թարգմանիչ, փորձագետ, կողմերից մեկի փաստաբան կամ դատական գերատեսչություններում զբաղված ցանկացած այլ անձ, և այլն),

- տուժող, վկա[1]:

Օրենսգրքում նշվում է, որ վերոնշյալ սուբյեկտների նկատմամբ որևէ սպառնալիք կամ ճնշում գործադրած անձը, որը կատարել է նշված գործողություններն այդ սուբյեկտներին հանցագործներին հարմար վարքագիծ դրսևորելուն հարկադրելու նպատակով (օրինակ՝ ցուցմունք տալուց հրաժարվելը կամ փոխելը), ենթակա է քրեական պատասխանատվության:

Բացի այդ, Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրքը նախատեսում է առավել խիստ պատիժներ՝ քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ կատարված ապօրինի գործողությունների իրականացման համար՝ ահաբեկում, սպառնալիք, կաշառք, բռնության գործադրում, գույքի վնասում և այլն:

Օրինակ՝ «Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 3223-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ուրիշի գույքը վնասելու կամ փչացնելու համար սովորաբար նախատեսվում է պատիժ՝ մինչև երկու տարի ժամկետով ազատազրկման ձևով, սակայն հանցագործության ականատեսների, տուժողների և իրավապահ մարմինների ծառայողների նկատմամբ իրականացված նույն գործողությունների համար օրենսգիրքը նախատեսում է մինչև հինգ տարվա ազատազրկման ձևով պատիժ: Պատասխանատվության են ենթարկվում նաև այն անձինք, որոնց դիտավորյալ գործողությունները փաստացի ուղղակիորեն չեն ազդել քրեական դատավարության ընթացքի

[1] Տե՛ս նույն տեղում:

վրա: Նման գործողությունները կարող են համարվել լրատվամիջոցների, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների նկատմամբ ճնշում գործադրելու փորձերը»[1]:

Գործնականում քրեական վարույթի մասնակիցների պաշտպանության միջոցները Ֆրանսիայում սկսում են կիրառվել հանցագործության մասին հաղորդումը ընդունելու պահից: Այդ պահից սկսած՝ տուժողների և վկաների ինքնությունը չի բացահայտվում, նրանց անձնական տվյալները և նրանց վերաբերյալ տեղեկությունները գաղտնիացվում են:

Դատապարտված անձանց համար նախատեսված են մի շարք սահմանափակումներ, որոնք, այլ միջոցներին զուգահեռ, օգտագործվում են տուժողներին և վկաներին հետագա քրեական ազդեցությունից պաշտպանելու համար: Դատավճռով նշանակված պատժի կատարումը հետաձգելու պարագայում, օրինակ՝ պատիժը նշանակող դատավորը կամ կատարումն ապահովող դատավորը կարող է դատապարտյալին պարտավորեցնել բնակվել որոշակի վայրում, ձեռնպահ մնալ հատուկ նշված վայրեր այցելելուց կամ որոշակի անձանց, մասնավորապես արարքից տուժած անձի հետ հարաբերություններ հաստատելուց:

Ֆրանսիայի քրեադատավարական օրենսդրությունը պարունակում է քրեական դատավարության մասնակիցների պաշտպանությունը երաշխավորող մի շարք նորմեր: Դրանցից են, օրինակ, կասկածյալի կամ մեղադրյալի կողմից տուժողի կամ վկայի նկատմամբ ճնշումը կանխելու նպատակով նրան կալանավորելը, քննիչի կողմից մատնանշված անձանց միջև շփումների արգելումը, դռնփակ դատական նիստի անցկացումը:

Վերջինիս պարագայում՝ հարկ է նշել նաև, որ Ֆրանսիայում խստորեն պահպանվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքը: Քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է հանրայնության սկզբունքը և դա սահմանափակում է միայն այն դեպքերում, երբ դռնբաց դատավարության անցկացումը կարող է վտանգել հասարակական կարգը կամ բարոյականությունը:

Քրեական դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու համար Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է վկայի մասնակցություն՝ բնակության վայրի վերաբերյալ տեղեկություններ գաղտնիացմամբ: Դրանց փոխարեն արձանագրությունում գրանցվում է մեկ այլ հասցե կամ Ոստիկանության ստորաբաժանման հասցեն: Նման իրավունք ունեն նաև դատավարությանը մասնակցող պաշտոնատար անձինք:

«Ֆրանսիայի արդարադատության նախարարությանը կից գործում է հանցագործության զոհերի գործերով հատուկ բյուրո, որը համակարգում է հանցագործությունից տուժած անձանց համար մասնագիտացված ծառայությունների տրամադրման գործընթացը: Բացի այդ, Ֆրանսիայում գործում է Հանցագործության զոհերին աջակցության ազգային ինստիտուտ, որը մշակում է աջակցության ծրագրեր և համակարգում է այս ոլորտում հասարակական կազմակերպությունների գործունեությունը»[2]: Հանցագործության զոհերին աջակցության ազգային ինստիտուտին զուգահեռ՝ գործում է նաև միջգերատեսչական կոմիտե: Այս կառույցներն ինչպես անմիջապես ներգրավված են պաշտպանության և օգնության տրամադրման աշխատանքներում, այնպես էլ միասին համակարգում են շուրջ 150 ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների, շարժումների գործունեությունը, որոնք աջակցություն են ստանում թե՛ պետական, թե՛ տեղական ինքնակառա-

[1] **Головко Л.В.** Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции. – М., 1995, էջ 90.

[2] Տե՛ս **Иванов И.С**. Переселение защищаемого лица на другое постоянное место жительства в отечественном и зарубежном праве // Российский следователь. 2013. № 6, էջ 41.

վարման մարմիններից: Յուրաքանչյուր տարի Ազգային ինստիտուտն օգնություն է ցուցաբերում շուրջ 75 հազար անձի:

Մեծ Բրիտանիա— Մեծ Բրիտանիայում քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության ծրագիրը սկսում է գործել «օգնության թեժ գծին» զանգահարելու պահից, որի միջոցով տուժողը, վկան կամ ապօրինի ազդեցության ենթարկված այլ անձ կարող է գործնական խորհրդատվություն ստանալ՝ ցանկացած դժվարին խնդրի պարագայում: Բացի դրանից, հետագայում նույն համարով տուժողները կարող են հավելյալ տեղեկություններ ստանալ հանցագործի պատժի մնացած ժամկետի և քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրի մասին[1]:

Մեծ Բրիտանիայում քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության հատուկ միջոցներից վկաների և տուժողների անվտանգության պաշտպանությունը, նրանց ուղեկցումը ոստիկանություն և դատական մարմիններ իրականացվում են վկաների անվտանգության հատուկ ծառայության կողմից: Այս կառույցը համեմատաբար նոր է: Այն ստեղծվել է 2012 թվականին, իսկ մինչ այդ պաշտպանվող անձանց անվտանգության ապահովումը վստահված էր ոստիկանության և արդարադատության նախարարության մի քանի տարբեր ստորաբաժանումների: Նման պարագայում ծրագրի իրականացումը խիստ անարդյունավետ էր, և դեպքերի 25%-ում վկաները հրաժարվել են մասնակցել դատական նիստերին և տալ հրապարակային ցուցմունքներ:

Իսպանիա— Իսպանիայի Թագավորությունում քրեական դատավարության ընթացքում վկաների պաշտպանությունը կարգավորող հիմնական իրավական ակտը «Քրեական գործերով վկաների և փորձագետների պաշտպանության մասին» օրենքն է, որը ընդունվել է 1994 թվականին[2]:

Իսպանական օրենսդրության համաձայն՝ վկան այն անձն է, որը կարող է տեղյակ լինել քրեական գործի քննությանն ու դրա արդյունքում կայացվող որոշմանը վերաբերող ցանկացած հանգամանքի և հրավիրվում է դատարան, վարույթն իրականացնող մարմին՝ ցուցմունք տալու նպատակով: Քանի որ սովորաբար քննության ընթացքում կասկածյալի և մեղադրյալի մեղքը հաստատող հիմնական ապացույց են վկաների ցուցմունքները, օրենքի դրույթները կոչված են աջակցելու վկաներին արդարադատության հետ համագործակցելու իրենց սահմանադրական պարտականությունը կատարելիս:

Նշված օրենքը բավականին հակիրճ է՝ ընդամենը չորս հոդված: Օրենքի նախաբանում՝ որպես շարժառիթ նշվում է, որ քաղաքացիները հաճախ հրաժարվում են օգնել իրավապահ և դատական մարմիններին՝ դատավարության այլ մասնակիցների կողմից հնարավոր հաշվեհարդարի վախի պատճառով, որն առաջանում է հոգեբանական կամ ֆիզիկական սպառնալիքների հետևանքով: Ստացվում է, որ դատավարության ընթացքում արդարադատություն իրականացնող մարմինները չեն կարող հիմնվել վկաների ցուցմունքների ու արժեքավոր ապացույցների վրա, որոնք անհրաժեշտ են դատական քննության համար: Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է, որ վկաներին տրված երաշխիքները չեն կարող լինել բացարձակ և անսահմանափակ, այսինքն՝ չեն կարող խախտել քրեական դատավարության սկզբունքները: Ընդհանուր առմամբ օրենքը նպատակ է ունեցել ստեղծել անհրաժեշտ հավասարակշռություն արդար դատաքննության իրավունքի իրացման բոլոր երաշխիքների և վկաների ու նրանց ընտանիքների անօտարելի հիմնարար իրա-

[1] Տե՛ս **Peter Dunn** Victim support in the UK- Its history and current work, 123rd international senior seminar visiting experts papers, resource material series № 63 https://www.unafei.or.jp/publications/pdf/RS_No63/No63_15VE_Dunn1.pdf.

[2] Տե՛ս **Краснова К.А.** Опыт государств - членов Европейского Союза в сфере защиты свидетелей // «Татищевские чтения: актуальные проблемы науки и практики». Материалы XI Международной научно-практической конференции. - Тольятти, 2014, Ч. II. С. 138.

վունքների պաշտպանության միջև:

Վկաների նկատմամբ անվտանգության միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ է ամրագրել նրանց դատավարական կարգավիճակը և գնահատել ինչպես դատավարական գործողությունների մասնակցի, այնպես էլ նրա հարազատների համար առկա ռիսկերը:

Դատարանը, հաշվի առնելով ռիսկի կամ վտանգի աստիճանը, կայացնում է պատճառաբանված որոշում՝ վկաների և փորձագետների անձնական տվյալների, նրանց բնակության վայրի, զբաղվածության և աշխատանքի վայրի մասին տեղեկությունները պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ[1]:

Մասնավորապես, այդպիսի որոշումներով հնարավոր է ապահովել հետևյալ միջոցների իրականացումը՝

- քրեական գործի նյութերում անձանց անունների, ազգանունների, բնակության և աշխատանքի հասցեների, զբաղվածության տեսակի կամ նույնականացման համար օգտագործվող այլ տվյալների ներառման բացառում: Դրանց փոխարեն կարող են օգտագործվել թվային կամ այլ տեսակի ծածկագրեր;
- դատական նիստերի ժամանակ այնպիսի միջոցների օգտագործում, որոնք անհնարին են դարձնում պաշտպանվող անձանց տեսողական նույնականացումը;
- ծանուցումների և ծանուցագրերի մեջ որպես բնակության վայր գործընթացին մասնակցող հատուկ իրավաբանական անձի հասցե նշելը: Այդ իրավաբանական անձը հետագայում դրանք գաղտնի եղանակով կհանձնի հասցեատիրոջը: Դատարանի որոշմամբ՝ որպես բնակության վայր կարող է նշվել նաև դատարանի հասցեն:

Այսպիսով, դատավորը կարող է որոշում կայացնել դատավարության գործընթացին վկայի մասնակցությունը անանունության պայմաններում ապահովելու մասին:

Դատարանների, դատախազության և այլ իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է ապահովեն, որ վկաներին կամ փորձագետներին չլուսանկարեն կամ նրանց պատկերը այլ կերպ չֆիքսվի, ինչպես նաև առգրավեն այս արգելքը խախտող անձանց կողմից կատարված լուսանկարները, տեսանյութերը, ֆիլմերը, տեսանկարահանող տարբեր սարքերով արված ձայնագրությունները կամ այլ նմանատիպ նյութերը: Նշված նյութերը կարող են վերադարձվել սեփականատիրոջը, եթե հաստատվի, որ դրանցում կամ դրանց կրկնօրինակներում չկան կադրեր կամ դրվագներ, որոնցում վկաները կամ փորձագետները կհայտնվեն այնպես, որ հնարավոր լինի նրանց նույնականացնել:

Դատախազության միջնորդության հիման վրա վկաներին կամ փորձագետներին դատավարության ողջ ընթացքում, իսկ լուրջ վտանգի պահպանման պարագայում նաև հետագայում տրամադրվում է ոստիկանական պաշտպանություն: Բացառիկ դեպքերում նրանց կարող են տրամադրվել այլ անձնական տվյալներով փաստաթղթեր, ինչպես նաև բնակության վայրը և աշխատատեղը փոխելու համար ֆինանսական միջոցներ: Վկաները կարող են միջնորդել, որ դեպի դատարանի շենք և դատարանից բնակության վայր իրենց տեղափոխեն ծառայողական մեքենաներով, իսկ դատարանի վարչական շենքում գտնվելու ընթացքում նրանց տրամադրվում է առանձին պահպանվող սենյակ:

Որոշ դրույթներ, որոնք ուղղված են քրեական դատավարության մասնակիցների անվտանգության ապահովմանը, ամրագրված են նաև Իսպանիայի Թագավորության քրեական օրենսգրքում: Մասնավորապես՝ որոշ հոդվածների համաձայն՝ որպես սանկցիա կարող է կիրառվել որոշակի տարածքում գտնվելու կամ այցելելու

[1] Տե՛ս Implementation Review Group Second session, Vienna, 30 May-3 June 2011. Item 2 of the provisional agenda, Executive summary: Spain, CAC/COSP/IRG/2011/CRP.4, 27 May 2011, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/30May-3June2011/CacCospIRG2011CRP4.pdf.

արգելք, դատապարտյալի կողմից հանցագործության վայր, ինչպես նաև տուժողի, վկաների կամ նրանց ընտանիքների բնակության վայր վերադառնալու արգելք՝ մինչև հինգ տարի ժամկետով: Այս պատժամիջոցները կիրառվում են մեղավոր անձի նկատմամբ ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ կիրառելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման պարագայում[1]:

Գերմանիա—Քրեական դատավարության բարեխիղճ մասնակիցների պետական պաշտպանության ինստիտուտը բավականին զարգացած է նաև Գերմանիայում, որտեղ ավելի քան 20 տարի կիրառվում են նշված անձանց պաշտպանության մասնագիտացված ծրագրեր: Սակայն, մինչ այդ երկար ժամանակ չկար քրեական վարույթի մասնակիցների պաշտպանության գործընթացի հստակ իրավական կարգավորում, տուժողների և վկաների պաշտպանության ծրագիրը չէր հիմնվում հստակ նորմերի վրա, և չկային հատուկ ոլորտային կարգավորումներ:

Գերմանիայում քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության կանոնակարգման հիմքը դրվեց 1986 թվականի դեկտեմբերի 10-ին «Տուժողների պաշտպանության մասին» օրենքի ընդունմամբ, որը ոլորտում իրավական դաշտի ձևավորման առաջին քայլն էր:

Նշված օրենքով սահմանվեց հանցագործության տուժողների և նրանց ընտանիքների անդամների անձնական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համակարգ, ընդլայնվեցին և համակարգվեցին տուժողների իրավունքները, պարզեցվեցին վնասի հատուցման վերաբերյալ հայցադիմումներ ներկայացնելու կարգն ու պահանջները, սահմանվեց քրեադատավարական հարաբերությունների սուբյեկտի անվտանգությունն ապահովելու նպատակով դռնփակ դատական նիստերի անցկացման հիմքերի կոնկրետ ցանկ:

1988 թվականին Գերմանիայի քրեական ոստիկանության կողմից մշակվեց վկաների պաշտպանության հայեցակարգ, որում առաջին անգամ ձևակերպվեցին վկաների պաշտպանությունն ապահովող կազմակերպությունների ստեղծման և գործունեության համար անհրաժեշտ նպատակներն ու միջոցները[2]: Սույն հայեցակարգի համաձայն՝ հողերի քրեական ոստիկանությանը և դաշնային քրեական ոստիկանության վարչությանը կից ստեղծվել են վկաների պաշտպանության համակարգման կենտրոններ՝ անվտանգության հատուկ միջոցներ սահմանելու և ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների գործունեությունը համակարգելու նպատակով: Գերմանիայի տարբեր հողերում դատավարության մասնակիցների անվտանգության ապահովման գործընթացը միատեսակ չի կազմակերպվում[3]: Որոշ դեպքերում գործում է կենտրոնացված մոդել, որի համաձայն՝ պաշտպանությունը վստահվում է հողերի քրեական ոստիկանության ստորաբաժանումների՝ վկաների պաշտպանությունը համակարգող կենտրոններին: Մյուս դեպքերում պաշտպանությունն իրականացվում է հատուկ այդ նպատակների համար ստեղծված ստորաբաժանումների կամ առանձին աշխատակիցների կողմից, որոնց գործունեությունն իրականացվում է հողային համակարգման կենտրոնների վերահսկողությամբ՝ խիստ գաղտնիության պայմաններում: Անվտանգության նման պրակտիկան բացառում է անհարկի շփումներն այլ անձանց հետ և անհրաժեշտության դեպքում ապահովում է կապը միայն համակարգման վերոնշյալ կենտրոնների միջոցով:

---

[1] Տե՛ս Уголовный кодекс Испании, Москва, Зерцало, 1998. - 218 с.

[2] Տե՛ս Good Practices for the Protection of Witnesses in Criminal Proceedings Involving Organized Crime United Nations Office on Drugs and Crime, Vienna-New York, p:12-13 , 2008 https://www.unodc.org/documents/middleeastandnorthafrica/organised-crime/Good_Practices_for_the_Protection_of_Witnesses_in_Criminal_Proceedings_Involving_Organized_Crime.pdf .

[3] Տե՛ս նույն տեղում:

Վկաների պաշտպանության այս հայեցակարգի հիման վրա 1990 թվականին ընդունվեցին Արդարադատության և Ներքին գործերի դաշնային և նահանգային նախարարների՝ վտանգի տակ գտնվող վկաների պաշտպանության հիմնական ցուցումները, որոնցում ամրագրվել են քրեական դատավարությանն աջակցող անձանց պաշտպանություն իրականացնող մարմինների գործունեության հիմքերը, սահմանվել են նպատակները, խնդիրները և գործառույթները:

Հիմք ընդունելով վկաների պաշտպանության նշված հայեցակարգը և հողերի ներքին գործերի և արդարադատության նախարարների, ինչպես նաև դաշնային սենատորների ընդհանուր ցուցումները՝ 1993 թվականին ընդունվել է հատուկ նորմատիվ իրավական ակտ՝ «Հիմնական վկայի մասին» օրենքը: Այս օրենքը սահմանել է դրույթներ քրեական դատավարության այն մասնակցի պաշտպանության համար, ով տեղեկություններ ունի ծանր հանցագործությունների կատարման մասին: Արդարադատությանն աջակցող անձանց պաշտպանության ծրագրում ընդգրկելու հիմնական պայմանը նրանց կամավոր համաձայնությունն է: Հակառակ պարագայում պաշտպանության միջոցառումների կազմակերպումը դադարեցվում է:

Պաշտպանության դասական միջոցներից (անձին այլ տարածք տեղափոխել, նույնականացնող տվյալների փոփոխության կամ անվտանգության ապահովման հետ կապված գործողություններ) բացի՝ Գերմանիայի օրենսդրությունը նախատեսում է նաև այլ միջոցներ: Այդպես օրինակ՝ հարցաքննվում է ոչ թե վկան, այլ այն պաշտոնատար անձը, որին վկան հայտնել է գործին առնչվող տեղեկությունը, վկայի գտնվելու վայրը գաղտնիացվում է, ոստիկանության ծառայողների կողմից վերահսկվում է նամակագրությունն ու այլ գրագրությունները, ինչպես նաև նրա հարազատների և տարբեր հիմնարկների աշխատակիցների հետ խոսակցությունները, այդ թվում՝ հեռախոսային, ստուգվում են փաստաթղթերը: Բացի այդ, այս կարգավորումները նախատեսում են, որ դատարանի դահլիճ մտնող անձինք ենթարկվում են խուզարկության, արգելվում է առանձին անձանց մուտքը դահլիճ, եթե նրանց կողմից հնարավոր է ապօրինի գործողությունների իրականացում:

Անվտանգության միջոցների կիրառման և վկաների պաշտպանության իրավական հիմքը քրեական ոստիկանության քննիչի և դատախազի համատեղ արձանագրությունն է, որն ուղարկվում է վկաների պաշտպանության համակարգման կենտրոն: Այս փաստաթուղթը պետք է հիմնված լինի վտանգի առկայությունը հաստատող հանգամանքների և պաշտպանության կարիք ունեցող անձի վերաբերյալ գործի քննությունն իրականացնող ոստիկանության ստորաբաժանման կողմից հավաքագրված տվյալների վերլուծության վրա:

1995 թվականին «Դատական համակարգի մասին» օրենքում դռնփակ դատական նիստի անցկացման վերաբերյալ կատարված փոփոխությունների համաձայն՝ վարույթի մրցակցայնության և ապացույցների ուղղակի ներկայացման սկզբունքների պահպանման պարագայում վտանգի տակ գտնվող անձը հնարավորություն ունի հանդես գալու դատարանում՝ չհրապարակելով իր անձնական տվյալները:

Գերմանիայի քրեական դատավարության օրենսգիրքում նախատեսված են նաև այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են վտանգի մեջ գտնվող վկայի հարցաքննության տեսագրության օգտագործումը և քրեական դատավարության մասնակիցներին իրավական օգնություն ցույց տալու պարտավորությունը:

Հետագայում Գերմանիայում ընդունվել են մի շարք նորմատիվ իրավական ակտեր, որոնք մանրամասնորեն կարգավորում են քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության առանձին հարցեր: Այսպիսով, Գերմանիայում օրենսդիրը ձգտել է ներպետական օրենսդրությամբ համակողմանիորեն կարգավորել վկաների և տուժողների պաշտպանության հարցերը բոլոր տեսանկյուններից և չի սահմանափակվել քրեադատավարական նորմերով: Դա պայմաններ է ստեղծել պաշտպանության ենթակա անձանց անվտանգության միջոցների երկարաժամկետ, այդ թվում՝ ցմահ կիրառման համար:

Այսպիսով, Գերմանիայում քրեական դատավարության մասնակիցների անվտանգությունն ապահովելու համար կիրառվում է միջոցառումների երկու համակարգ: Առաջինը երկարաժամկետ պաշտպանությունն է, որն ապահովվում է ոստիկանության կողմից վկաներին իրենց բնակության, աշխատանքի վայրում, հասարակական վայրերում և հատկապես դատարանի դահլիճում պաշտպանելուն ուղղված բոլոր եղանակների իրագործմամբ: Բացի այդ, միջոցներ են ձեռնարկվում վկայի գտնվելու վայրի գաղտնիացման ուղղությամբ՝ լիովին բացառելով տեղեկատվության արտահոսքը[1]:

Անվտանգային միջոցառումների երկրորդ համակարգը վկայի լիարժեք մեկուսացումն է արտաքին աշխարհից: Այս միջոցառումները ուղղված են հիմնականում պաշտպանության ենթակա անձին նոր բնակության վայր ընտրելուն, աշխատանքի, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական օգնություն ցուցաբերելուն, որոնց ավարտից հետո պաշտպանված անձը սկսում է «նոր» կյանք[2]:

Պաշտպանության նշված միջոցների կիրառման դեպքում ոստիկանության համապատասխան ծառայողները պաշտպանված անձանց տեղեկացնում են նրանց իրավունքների և քրեական դատավարության գործընթացում ունեցած դերի մասին: Գործընթացի մասնակիցների հետ հարաբերությունները ձևավորվում են վստահության կանխավարկածի հիման վրա, սակայն ոստիկանության աշխատակիցները պետք է նրանց տրամադրեն միայն նվազագույն անհրաժեշտ տեղեկատվություն և մշտական վերահսկողություն իրականացնեն:

Ծրագրում ընդգրկված անձի անվտանգության համար պատասխանատու է անվտանգության համակարգման այն կենտրոնը, որը վերահսկում է պաշտպանվող անձի բոլոր շփումները:

Հարկ է նշել նաև, որ Գերմանիայում գործում են քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության այլ եղանակներ ևս: Օրինակ՝ 1997 թվականին հիմնված «Սպիտակ օղակ» հասարակական կազմակերպությունը, որը ստեղծվել է 17 հասարակական և կրոնական գործիչների կողմից, ունի ավելի քան 20000 անդամներ, ովքեր օգնում են պետությանը՝ պաշտպանելու վկաներին և հանցագործության զոհերին: Այս կազմակերպությունը յուրաքանչյուր տարի բավականին մեծ գումարներ է հատկացնում վկաների պաշտպանության ծրագրին:

Գործնականում պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցառումների իրականացումը երաշխավորվում է մի քանի պայմանների պարտադիր պահպանմամբ: Դրանցից են՝

- վկաների պաշտպանության գործառույթն իրականացնող ստորաբաժանման առանձնացվածությունը այլ վարչություններից,
- պաշտպանության ենթակա անձի կամավոր մասնակցությունը ծրագրին և նրա կողմից անվտանգության միջոցառումների իրականացմանը առավելագույն աջակցության ցուցաբերումը,
- կանոնավոր մշտադիտարկում,
- գաղտնիության սկզբունքի անվերապահ պահպանում:

Եզրակացություն - Այսպիսով, քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության ոլորտում զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ վկաների և տուժողների անվտանգության արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է ոչ միայն սահմանել համապատասխան նորմեր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում, այլև ձևավորել պաշտպանության մեխանիզմների կուռ համակարգ: Վերջինս

---

[1] Տե՛ս **Журба О.Л., Лысенко Я.В.,** Зарубежный оопыт обеспечения безопасности уяастников уголовного процесса// Крымский научный вестник, № 2(27), Ялта, 2020.

[2] Տե՛ս **Краснова К. А.** Защита свидетелей в государствах-членах ЕС // Международное право. 2015. № 4. էջ 66–86.

նախ և առաջ նախատեսում է տվյալ ոլորտը համակարգող առանձին օրենքների կամ ծրագրերի ընդունում, որտեղ կամրագրվեն գործունեության հիմնական սկզբունքները, չափանիշները և նորմերը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոչ միայն անձանց ֆիզիկական անվտանգության ապահովման, այլև նրանց հոգեբանական, սոցիալական և տնտեսական աջակցության նպատակով:

Վերոգրյալը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է նաև սահմանել ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների հստակ շրջանակ: Առավել արդյունավետ է մասնագիտացված մարմնի կամ իրավապահ մարմինների համակարգում մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծումը: Բացի այդ, անհրաժեշտ է ձևավորել քրեական դատավարության մասնակիցներին աջակցություն տրամադրող ոչ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործողությունները համակարգող մեխանիզմ: Նշված փոփոխությունները, իհարկե, պետք է ապահովվեն պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից տրամադրվող էական ֆինանսական հատկացումներով:

Քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի վերլուծությունը վկայում է ներպետական օրենսդրության մեջ առկա բացերի մասին: Ըստ էության, Քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխում սահմանված՝ վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանության նորմերի գործնական կիրառությունը կարգավորող միակ փաստաթուղթը «Քրեական վարույթում և վարույթից դուրս պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 560-Ն որոշումն է: Սակայն դա վերաբերում է միայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառմանը, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցներին: Այս որոշման դրույթներն իրենց հերթին բավականին մշակված չեն և ունեն առավել մանրամասն և հստակ ձևակերպման կարիք:

Միևնույն ժամանակ, պաշտպանության մյուս միջոցների կիրառման վերաբերյալ համանման որոշումները բացակայում են ինչպես գործադիր մարմնի, այնպես էլ իրավապահ և քննչական մարմինների մակարդակով: Բացակայում են նաև հատուկ պաշտպանության միջոցների կիրառումն իրականացնող առանձնացված մասնագիտական ստորաբաժանումներ կան մարմիններ, որոնք նաև վարույթի ավարտից հետո կապահովեն պաշտպանության շարունակականությունը:

Բացի այդ, Քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխում սահմանված՝ վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանության միջոցները հիմնականում ուղղված են անձի ֆիզիկական անվտանգության պաշտպանությանը, մինչդեռ անհրաժեշտ է մշակել սոցիալական, հոգեբանական և ֆինանսական աջակցության տրամադրման, ինչպես նաև իրականացված ծախսերի և կրած վնասների փոխհատուցման համապատասխան ընթացակարգեր:

Կարծում ենք, որ արդյունավետ կլինի նաև ոլորտում մասնավոր ընկերությունների և հասարակական կազմակերպությունների ներգրավվումը քրեական դատավարության մասնակիցների անվտանգության ապահովման և աջակցության տրամադրման գործընթացում:

Իհարկե բարեփոխումների բոլոր առաջարկները պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություն և կարող են դառնալ քննարկման առարկա՝ հաշվի առնելով ներպետական իրավական համակարգը, դրա առանձնահատկությունները, հասարակության մտածելակերպը և համաշխարհային չափանիշները, ինչը թույլ կտա մշակել քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության սեփական արդյունավետ համակարգ: Փոփոխությունների իրականացումը երկարատև գործընթաց

է, սակայն համապատասխան ուղենիշների առանձնացումը կարևոր է հետագայում պետական ծրագրերի և օրենսդրական փոփոխությունների նախագծերի կազմման համար: Կարծում ենք, որ ոլորտում բարեփոխումներն ապահովելու տեսանկյունից առաջնային քայլ կարող է լինել քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության ռազմավարության մշակումը, որը կներառի ընթացիկ դրության վերլուծություն, հնարավոր ռիսկերի գնահատում և ոլորտի արդյունավետ կարգավորումների մշակմանն ուղղված գործողությունների պլան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Good Practices for the Protection of Witnesses in Criminal Proceedings Involving Organized Crime United Nations Office on Drugs and Crime, Vienna-New York, p:12-13, 2008 https://www.unodc.org/documents/middleeastandnorthafrica/organised-crime/Good_Practices_for_the_Protection_of_Witnesses_in_Criminal_Proceedings_Involving_Organized_Crime.pdf

2. Implementation Review Group Second session, Vienna, 30 May-3 June 2011 Item 2 of the provisional agenda, Executive summary: Spain, CAC/COSP/IRG/2011/CRP.4, 27 May 2011, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/WorkingGroups/ImplementationReviewGroup/30May-3June2011/CacCospIRG2011CRP4.pdf

3. Peter Dunn Victim support in the UK- Its history and current work, 123rd international senior seminar visiting experts papers, resource material series № 63 https://www.unafei.or.jp/publications/pdf/RS_No63/No63_15VE_Dunn1.pdf

4. Piotr Bakowski. Witness protection programs: EU experience in the international context // Library Briefing: Library of the European Parliament. 28.01.2013.

5. Бабичева В. С. Институт охраны прав участников уголовного судопроизводства в Российской Федерации и в зарубежных странах, Национальная ассоциация ученых (НАУ) №76, РФ Санкт Петербург, 2022/

Institute for the protection og the rights of participants in criminal proceedings in the Russian Federation and in forign countries, National Association of Scientists (NAU) No. 76, RF St. Petersburg, 2022

6. Головко Л.В. Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции. – Москва, 1995./ Golovko, L.V. Inquiry and preliminary investigation in criminal cases in France, Moscow, 1995.

7. Дьяконов А.С., Сравнительно-правовой анализ регулирования механизма защиты участников уголовного процесса в Российской федерации и зарубежных стран, Вестник Прикамского социального института №1(69), РФ Пермь, 2015/ Dyakonov A.S., Comparative legal analysis of the regulation of the mechanism of protection of participants in criminal proceedings in the Russian Federation and foreign countries, Bulletin of the Prikamsky Social Institute No. 1(69), RF Perm, 2015

8. Журба О.В., Лысенко Я.В., Зарубежный опыт обеспечения безопасности уяастников уголовного процесса, Крымский научный вестник № 2(27), Ялта, 2020/ O.L. Zhurba, Y.V. Lysenko Foreign experience of security of participants of security of participants in the criminal proceesing, Crimean Scientific Bulletin No. 2(27), Yalta, 2020

9. Иванов И.С. Переселение защищаемого лица на другое постоянное место жительства в отечественном и зарубежном праве, Российский следователь. 2013. № 6./ Ivanov I.S. Relocation of the protected person to another permanent place of residence in domestic and foreign law, Russian investigator. 2013. No. 6.

10. Краснова К. А. Защита свидетелей в государствах-членах ЕС, Международное право. 2015. № 4./ Krasnova K. A. Witness protection in EU member states, International law. 2015. №. 4.

11. Краснова К.А. Опыт государств - членов Европейского Союза в сфере защиты свидетелей, «Татищевские чтения: актуальные проблемы науки и практики». Материалы XI Международной научно-практической конференции. - Тольятти, 2014, Ч. II. / Krasnova K.A. Experience of member states of the European Union in the field of witness protection , “Tatishchev Readings: Current Problems of Science and Practice.” Materials of the XI International Scientific and Practical Conference. - Togliatti, 2014, Part II.

12. Лозовский Д.Н., Европейский опыт деятельности правоохранительных органов по обеспечению безопасности участников уголовного судопроизводства, 2014/ Lozovsky D.N., European experience of law enforcement agencies in ensuring the safety of participants in criminal proceedings, 2014 https://core.ac.uk/outputs/75998303

13. Новые меры в отношении похищения лиц с целью вымогательства и меры по защите лиц, сотрудничающих с правосудиемосква Закон Италии// Сборник переводов. Москва, 1992. / New measures regarding kidnapping for the purpose of extortion and measures to protect persons collaborating with justice Moscow Law of Italy // Collection of translations. Moscow, 1992.

14. Уголовный кодекс Испании, Москва, Зерцало, 1998./ Criminal Code of Spain Moscow, Zertsalo, 1998.

АНАЛИЗ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ОПЫТА ГОСУДАРСТВЕННОЙ ЗАЩИТЫ УЧАСТНИКОВ УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

Седа Степанян
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ ,
Главный специалист департамента защиты прав в сфере уголовной юстиции аппарата Защитника прав человека Республики Армения

В данной статье обсуждаются вопросы, связанные с регулированием сферы обеспечения безопасности и государственным защиты участников уголовного процесса. В статье анализируется опыт зарубежных стран, в том числе США, Канады, Французской Республики, Великобритании, Королевства Испании, Итальянской Республики, Федеративной Республики Германия, по регулированию системы обеспечения безопасности участники уголовного процесса. На основе анализа соответствующих нормативно-правовых актов указанных стран и примеров практического применения определенных в них положений выделены критерии и механизмы формирования эффективной системы обеспечения безопасности участников уголовного судопроизводства. В результате проведенного исследования также было подчеркнуто, что в сфере защиты участников уголовного судопроизводства необходимы не только меры, направленные на обеспечение физической безопасности, но и единая система социальной, психологичес-

кой и финансовой поддержки. Также в статье рассматривается важность привлечения частных компаний и общественных организаций в сфере защиты участников уголовного судопроизводства. Кроме того, в статье сформулированы предложения по совершенствованию национального законодательства и юридической практики в сфере регулирования указанного правового института. В частности, обсуждалась необходимость разработки национальной стратегии государственной защиты участников уголовного судопроизводства с учетом отечественной правовой системы, ее особенностей, образа мышления общества и мировых стандартов.

ANALYSIS OF LEGISLATIVE EXPERIENCE OF STATE PROTECTION OF PARTICIPANTS IN CRIMINAL PROCEEDINGS IN FOREIGN COUNTRIES

Seda Stepanyan
PHD Student at the YSU Chair of Criminal Proceedings and Criminalistics,
Chief Specialist of Department for Protection of Rights in Criminal Justice of the staff of the Human Rights Defender of the Republic of Armenia

---

This article discusses issues related to the regulation of the sphere of ensuring the safety and state protection of participants in criminal proceedings. The article analyzes the experience of foreign countries, including the USA, Canada, the French Republic, the Great Britain, the Kingdom of Spain, the Italian Republic, the Federal Republic of Germany, in regulating the safety ensuring system for participants in criminal proceedings. Based on an analysis of the relevant legal acts of these countries and examples of the practical application of the provisions defined in them, criteria and mechanisms for the formation of an effective system for ensuring the safety of participants in criminal proceedings are highlighted. As a result of the study, it was also emphasized that in the field of protection of participants in criminal proceedings, not only measures are needed to ensure physical safety, but also a unified system of social, psychological and financial support. The article also discusses the importance of involving private companies and public organizations in the field of protecting participants in criminal proceedings. In addition, the article formulates proposals for improving national legislation and legal practice in the field of regulation of this legal institution. In particular, the need to develop a national strategy for state protection of participants in criminal proceedings was discussed, taking into account the domestic legal system, its characteristics, the way of thinking of society and world standards.

Բանալի բառեր - *քրեական դատավարություն, դատավարության մասնակիցների պետական պաշտպանություն, անվտանգություն, հանցագործությունից տուժած անձ, արդարադատության հետ համագործակցող անձ, արտասահմանյան փորձ, անվտանգության միջոցներ:*
Ключевые слова: *уголовное производство; государственная защита участников процесса; безопасность; жертва преступления; лицо сотрудничающее с правосудием; зарубежный опыт; меры безопасности.*
Key words: *criminal proceedings; public/ state protection; safety; crime victim; a person who cooperates with the justice system; foreigh experience, safety measures.*